Արձանագրություն N 2
«ՀՀՍՄ-ԳՀԾՁԲ-2022/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի բացման և գնահատման նիստի
ներքին աուդիտի ծառայություններ

ք. Կապան «28» հունիս 2022թ.
ժամը 12:00

Մասնակցում էին
հանձնաժողովի նախագահ՝ Ն.Դավթյան- Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
հանձնաժողովի անդամներ՝ Մ.Աբգարյան- Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
Ն.Գրիգորյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ
Գ.Սարգսյան- Սյունիքի մարզպետարանի քարտուղարության ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ
Ն.Աթայան -ՀՀ Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության Ֆինանսատնտեսական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ
հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Գրիգորյան- գնումների համակարգող

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հայտարարության և հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 12:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

2. Տեղեկություններ հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀՍՄ-ԳՀԾՁԲ-2022/05» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

h/h	Մասնակցի անվանումը	ՀՎՀՀ	Հասցե	Հեռախոս	Էլ. փոստի հասցե
1	«Գլոբ Աուդիտ»ՍՊԸ	00131856	ք.Երևան, Ալեք Մանուկյան 5	093 48 00 47	globaudit@mail.ru
2	«Քրոու ընդ Ասատրյանս»ՍՊԸ	02618043	ք.Երևան, Արգիշտի 7, Դոմ Մոսկվի	099543388	general@crowe.am
3	«Օրենք և Կարգ»ՍՊԸ	00842709	ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա, 70 շենք, բնակարան 55	055573375 095074474	law.discipline.llc@bk.ru
4	«ՍՄԱՐՏ ԱՈՒԴԻՏ»ՍՊԸ	08410295	ք.Երևան, Արշակունյաց պ.53Ա/33 շենք, բն.27	099152568	z.matosyan@mail.ru

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, սահմանված պայմաններին համապատասխանության մասին

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են: Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բացառությամբ «ՍՄԱՐՏ ԱՈՒԴԻՏ»ՍՊԸ-ի հայտի հավելված 1-ի վերջին պարբերությունը թերի է լրացված՝ բացակայում է իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ձևը, հավելված 1.2-ում

բացակայում է ստորագրությունը, ինչպես նաև հայտում բացակայում է հրավերով պահանջված հավելված 2.1-ը՝ առանձին տարրերի միավոր գները:

«Քրոու ընդ Ասատրյանս»ՍՊԸ-ի հայտում բացակայում էր հրավերով պահանջված հավելված 2.1-ը՝ առանձին տարրերի միավոր գները:

4. Հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկը.

h/h	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային ընդհանուր գին	Մասնակցի առաջարկած գինը		
			առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	«ՍՄԱՐՏ ԱՈՒԴԻՏ»ՍՊԸ	8962600	**6800000**	**1360000**	**8160000**
2	«Գլոբ Աուդիտ»ՍՊԸ		7468333	1493667	8962000
3	«Օրենք և Կարգ»ՍՊԸ		7468833,33	1493766,67	8962600
4	«Քրոու ընդ Ասատրյանս»ՍՊԸ		20000000	4000000	24000000

5. Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6" Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

7. Մասնակիցներին հայտաբերված անհամապատասխանությունների շտկման հնարավորություն տալու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի բացման և գնահատման նիստը կասեցնել 1 (մեկ) աշխատանքային օրով և այդ մասին ծանուցել մասնակցին նույն աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 , դեմ՝ 0:

8. Գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի բացման և գնահատման նիստը շարունակել 30.06.2022 թ-ին ժամը 17:00-ին ք.Կապան, Գ.Նժդեհի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

Հայտերի բացման և գնահատման նիստը շարունակվեց 30.06.2022 թ-ին ժամը 12:00-ին ք.Կապան, Գ.Նժդեհի 1 հասցեում, որին մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Ն.Դավթյան
հանձնաժողովի անդամներ՝ Մ.Աբգարյան
Ն.Գրիգորյան
Գ.Սարգսյան
Ն.Աթայան
հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Գրիգորյան

9" Սահմանված ժամկետում մասնակիցների կողմից շտկվել են արձանագրված անճշտությունները և ներկայացվել գնահատող հանձնաժողովին:

10" Հայտերը գնահատվել են «ՀՀՍՄ-ԳՀԾՁԲ-2022/05» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին և գնահատվել են «Բավարար»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

11"Հիմք ընդունելով գնահատման արդյունքները, հանձնաժողովը որոշեց «ՀՀՍՄ-ԳՀԾՁԲ-2022/05» ծածկագրով մրցույթի ընտրված մասնակից ճանաչել «**ՍՄԱՐՏ ԱՈՒԴԻՏ»ՍՊԸ-ին** և անգործության ժամկետի ավարտից հետո նրան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

12. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Ն.Դավթյան

Անդամներ՝ ---------- Մ. Աբգարյան

---------- Ն.Գրիգորյան

---------- Ն.Աթայան

---------- Գ.Սարգսյան

Քարտուղար՝ ---------- Ս. Գրիգորյան